ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Գառնիի համայնքապետարանի կարիքների համար
ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

14.01.2026թ.

գ. Գառնի

Ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Արփենիկ Բաղդասարյան- Կոտայքի մարզի «Գառնի Համայնքապետարանի» ֆինանսական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)

Հանձնաժողովի անդամներ՝
Արսեն Մարտիրոսյան- Կոտայքի մարզի «Գառնի Համայնքապետարանի» համայնքի ղեկավարի օգնական (հանձնաժողովի անդամ)

Գևորգ Մարտիրոսյան- Կոտայքի մարզի «Գառնի Համայնքապետարանի» գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)

Հռիփսիմե Բաղդասարյան -«Գառնի Համայնքապետարանի» համայնքի առաջատար (հանձնաժողովի անդամ)

Լիպարիտ Թադևոսյան-«Գառնի Համայնքապետարանի» համայնքի աշխատակազմի ղեկավար (հանձնաժողովի անդամ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Սոնա Նավասարդյան

ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկատվություն՝ ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված բացման վայրի , օրվա և ժամի մասին.

1.1 **ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01** ծածկագրով մրցույթի հայտերը **www.armeps.am կայքում էլեկտրոնային** ձևով բացվել են **2026 թվականի հունվարի 5-ին, ժամը 10:00-ին:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

2.1 **Գառնիի համայնքապետարանի** կողմից կազմակերպված **ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Հ/հ	Մասնակիցների տվյալներ
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ ՀՎՀՀ 08417251, ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8 էլ հասցե՝ info@haldi.am Հեռ. 374 91 430416
2	«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ ՀՎՀՀ00917131 ՀՀ, ք. Երևան, Ավան Առինջ 1-ին միկրոշրջան 1/7 5 էլ հասցե՝ tender@bime.am Հեռ. 091333032
3	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ ՀՎՀՀ00813453 ք.Երևան Աճառյան 54 բն էլ հասցե՝ lilit.poghosyan@dorproject.am Հեռ.093081787
4	«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ ՀՎՀՀ 00490182 ք. Երևան, Ռուբինյանց փ. / շենք 2/3 / բն.50 էլ հասցե՝ infradesign@mail.ru Հեռ. 096101501

05.01. 2026թ.-ի ժամը 10:00-ի դրությամբ մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2.2 .Մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստ հրավիրել 2026 թվականի հունվարի 12-ին ժամը 10:00-ին

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

12.01.2026թ թվականին, ժամը 10:00–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 .Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին

4.2 Մասնակցի հայտերով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են **ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01** ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող բացառությամբ՝

«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված *առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների կողմից* ***հաստատած գրավոր համաձայնությունները պետք է ստորագրվեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև բացակայում է մասնագետների անձը հաստատող փաստաթղթերը:***

«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված *առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների կողմից* ***հաստատած գրավոր համաձայնությունները պետք է ստորագրվեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև հրավերով սահմանված որակավորման համար հիմք հանդիսախող փաստաթղթերը***

«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով սահմանված *առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների ցանկը, մասնագետների* ***հաստատած գրավոր համաձայնությունները էլեկտրոնային թվային ստորագրությամբ, լիցենզիայի տեսակը իր ներդիրներով, հրավերով սահմանված որակավորման համար հիմք հանդիսախող փաստաթղթերը***

հանձնաժողովը որոշեց «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

14. 01.2026 թվականին, ժամը 10:00–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

5. Տեղեկություն՝ ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01 ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին

5.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել են հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը,

6.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝1 **ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում ոռոգման ցանցի աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ**		
	գնման գինը՝ 1 344 000 ՀՀ դրամ		
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	1 080 000	216 000	1 296 000
«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	1 340 000	0	1 340 000

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 2 **ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում խմելու ջրագծի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ**		
	գնման գինը՝ 2 900 000 ՀՀ դրամ		
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	2 250 000	450 000	2 700 000

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 4 **ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում լուսավորության աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ**		
	գնման գինը՝ 1 680 000 ՀՀ դրամ		
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	1 250 000	250 000	1 500 000

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 5 **ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ**		
	գնման գինը՝ 12 000 000 ՀՀ դրամ		
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	6 250 000	1 250 000	7 500 000
«Ճաննախագիծ իստիտուտ» ՍՊԸ	8 333 000	1 666 600	9 999 600
«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	11 800 000	0	11 800 000

6.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

7.1 **ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա

1-ին,2-րդ 4-րդ 5-րդ չափաբաժինների մասով ընթացակարգի /ընտրված/ մասնակից **«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ -ին:**

- **ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01** ծածկագրով ընթացակարգի ***հանձնաժողովի որոշմամբ*** ՝ 3-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած **«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետի համաձայն (ոչ մի հայտ չի ներկայացվել):**

7.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել **ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

7.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց **ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և 36-րդ հոդվածների պահանջներ

7.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է կիրառվում միայն 3-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

8.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

9.1 **ԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-2026/01** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա.Բաղդասարյան

Հանձնաժողովի Անդամներ՝ _____ Ա.Մարտիրոսյան

_____ Գ .Մարտիրոսյան

_____ Հ. Բաղդասարյան

_____ Լ.Թադևոսյան

Գնումները համակարգող՝ _____ Ս .Նավասարդյան

Digitally signed by NAVASARDYAN SONA 6401920351
Date: 2026.01.14 15:30:25 AMT